ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/294

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17601-2021 գրությամբ Ա/Ձ Արթուր Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.10.2021թ. թիվ ՊՆ/02/5602-2021 գրության հիման վրա, 27.10.2021թ. թիվ 26/26-1/17601-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արթուր Հարությունյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արթուր Հարությունյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արթուր Հարությունյանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ա/Ձ Արթուր Հարությունյան մացնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-4/8» ծածկագրավ գնանշման հարցմանը մրցույթին և 8-րդ չափաբաժնի մասով «03 » օգոստոս 2021 թ. կնքել N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 պայմանագրի, պայմանագրի առարկա է հանդիսացել՝ Ուայթ սպիրիտ (լաքային բենզին) (ՈԽայտ-սպիրիտ): Ա/Ձ Արթուր Հարությունյան Ուայթ սպիրիտ (լաքային բենզին) (ՈԽայտ-սպիրիտ) ձեռք է բերում ՀՀ Շուկայից համապատասխան ներմուծողներից, պայմանագրի կնքելուց հետո պայմանագրով սահմանված ժամկետում Ա/Ձ Արթուր Հարությունյան մատակարարում է համապատասխան որակական հատկանիշներ ունեցող Ուայթ սպիրիտը և ներկայացրել արտադրողի կողմից համապատասխան սերտիֆիկատը: Միայն չի համապատասխանել արտադրման օրը որը չի կարող էական նշանակություն ունենալ տվյալ ապրանքատեսակի որակական հատկանիշների վրա:

Երբ Ա/Ձ Արթուր Հարությունյանին ժամկետի պատճառով մերժել են ապրանքի ընդունումը, Արթուր Հարությունյանը համապատասխան միջոցներ է ձեռնարկել այլ կազմակերպություններից Ուայթ սպիրիտ ձեռք բերելու համար և պարզել որ Հայաստանի Հանրապետություն 2021թ.-ին Ուայթ սպիրիտ (լաքային բենզին) (ՈԽայտ-սպիրիտ) ներմուծում չի եղել:

Ա/Ձ Արթուր Հարությունյանը չէր կարող ներմուծում կատարել, քանի որ այս կազմակերպությունը չունի այդ իրավունքը:

Խնդրում ենք հաշվի առնել վերը նկարագրվածը և Ա/Ձ Արթուր Հարությունյանին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և տույժերը ու տուգանքները կիրառել նվազագույն չափով»:

Ա/Ձ Արթուր Հարությունյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/294 ընթացակարգի շրջանակներում 02.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.10.2021թ. թիվ ՊՆ/02/5602-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Արթուր Հարությունյանին միջև 03.08.2021թ. կնքված «ԳՀԱՊՁԲ-21-4/8-3» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հոկտեմբերի 13-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է «ԳՀԱՊՁԲ-21-4/8-3» գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 13.10.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/294 ընթացակարգի շրջանակներում 09.11.2021թ. ժամը 09:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/294 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/294 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Արթուր Հարությունյանի միջև 03.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/8-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը. «Մատակարարումը 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 01.09.2021թ., ընդ որում՝ 3-րդ եռամսյակ»:

3. ՀՈՒ սպառազինության պետ-վարչության պետը ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետին ուղղված 24.09.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՏՍՏ կարիքների ապահովման համար 03.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 պայմանագրով Ա/Ձ Արթուր Հարությունյանի կողմից չեն մատակարարվել մինչև ս.թ. սեպտեմբերի 1-ը մատակարարման ենթակա «Ուայթ սպիրիտ (լաքային բենզին)» անվանատողով 1993 լիտր ուայտ սպիրիտը (1383142 դրամի): ՊՆ 79512 (1337կգ) զորամաս մատակարարված ապրանքը ետ է վերադարձվել մատակարարին՝ տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով:

Խնդրում եմ Ձեր հանձնարարությունը համապատասխան ստորաբաժանմանը ընկերության հետ քննարկել վերոնշյալ պայմանագրերի կատարման ընթացքը և մատակարարումից հրաժարվելու դեպքում պայմանագիրը ներկայացնել լուծման՝ կիրառելով համապատասխան տուգանքները:

Արդյունքների վերաբերյալ խնդրում եմ տեղեկացնել ՀՈՒ սպառազինության վարչություն՝ անվանատողով ծանրաբեռնված գումարը կրճատման ներկայացնելու համար»:

4. Գնմանը հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 24.09.2021թ. կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 53 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ. «Պայմանագրով նախատեսված Ուայթ սպիրիտ 30.08.2021թ. մատակարարել է ՊՆ 79512 (1337 լիտր) զորամաս, որը տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին: ՊՆ 84029 (656 լիտր) զորամասին չի մատակարարվել: Հիմք ընդունելով վերոգրյալը տալիս եմ բացասական եզրակացություն: Ըստ գնման ժամանակացույցի 11 աշխատանքային օր ուշացում»:

5. Պատվիրատուն Ա/Ձ Արթուր Հարությունյանին ուղղված 14.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Արթուր Հարությունյանի միջև 03.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ա/Ձ Արթուր Հարությունյանը 2021թ. 3-րդ եռամսյակի

ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.09.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 1993 լիտր ուայթ սպիրիտ (լաքային բենզին): 30.08.2021թ. մատակարարված 1337 լիտր ուայթ սպիրիտը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին: Արդյունքում 1993 լիտր ուայթ սպիրիտ չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հոկտեմբերի 13-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը: (...)»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 14.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17601-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.10.2021թ. թիվ ՊՆ/02/5602-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Արթուր Հարությունյանի միջև 03.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-4/8-3» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ սահմանվել է ապրանքի մատակարարման հետևյալ ժամկետը. «Մատակարարումը 2021թ-ին՝ ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 01.09.2021թ., ընդ որում՝ 3-րդ եռամսյակ»:

ՋՈՒ սպառազինության պետ-վարչության պետը ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետին ուղղված 24.09.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՋՏՍՏ կարիքների ապահովման համար 03.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 պայմանագրով Ա/Ձ Արթուր Հարությունյանի կողմից չեն մատակարարվել մինչև ս.թ. սեպտեմբերի 1-ը մատակարարման ենթակա «Ուայթ սպիրիտ (լաքային բենզին)» անվանատողով 1993 լիտր ուայտ սպիրիտը (1383142 դրամի): ՊՆ 79512 (1337կգ) զորամաս մատակարարված ապրանքը ետ է վերադարձվել մատակարարին՝ տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով:

Խնդրում եմ Ձեր հանձնարարությունը համապատասխան ստորաբաժանմանը ընկերության հետ քննարկել վերոնշյալ պայմանագրերի կատարման ընթացքը և մատակարարումից հրաժարվելու դեպքում պայմանագիրը ներկայացնել լուծման՝ կիրառելով համապատասխան տուգանքները:

Արդյունքների վերաբերյալ խնդրում եմ տեղեկացնել ՋՈՒ սպառազինության վարչություն՝ անվանատողով ծանրաբեռնված գումարը կրճատման ներկայացնելու համար»:

Գնմանը հայտը նախագծած ներկայացուցչի կողմից 24.09.2021թ. կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 53 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ. «Պայմանագրով նախատեսված Ուայթ սպիրիտ 30.08.2021թ. մատակարարել է ՊՆ 79512 (1337 լիտր) զորամաս, որը տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին: ***<u>ՊՆ 84029 (656 լիտր) զորամասին չի մատակարարվել: Հիմք ընդունելով վերոգրյալը տալիս եմ բացասական եզրակացություն: Ըստ գնման ժամանակացույցի 11 աշխատանքային օր ուշացում»:</u>***

Պատվիրատուն Ա/Ձ Արթուր Հարությունյանին ուղղված 14.10.2021թ. ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ա/Ձ Արթուր Հարությունյանի միջև 03.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ա/Ձ Արթուր Հարությունյանը 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.09.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 1993 լիտր ուայթ սպիրիտ (լաքային բենզին): 30.08.2021թ. մատակարարված 1337 լիտր ուայթ սպիրիտը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին: Արդյունքում 1993 լիտր ուայթ սպիրիտ չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հոկտեմբերի 13-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 14.10.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված ***<u>փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u>*** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված

միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: ***Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը***.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ ***գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն***.

3) ***եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝***

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 109-րդ կետով նախատեսված ***գրավոր եզրակացության ձևը*** սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Այսպիսով՝ վերը շարադրված իրավական կարգավորումների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ.*** Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, համակարգի միջոցով տրամադրում է

պատասխանատու ստորաբաժանմանը, ***որից հետո պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցիչը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն, իսկ եթե վերջինիս կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերը նշված փաստաթղթերը, մասնավորապես՝ սահմանված ժամկետում կազմված բացասական եզրակացությունը առկա չէ, որպիսի պայմաններում հնարավոր չէ արձանագրել Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության խախտման փաստը:***

Այնուամենայնիվ հարկ եմ համարում արձանագրել, ***որ առկա է Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերության խախտում, այն է՝ համաձայն 24.09.2021թ. կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 53 եզրակացության՝ Պայմանագրով նախատեսված Ուայթ սպիրիտ (656 լիտր) չի մատակարարվել ՊՆ 84029 զորամասին՝ ըստ գնման ժամանակացույցի 11 աշխատանքային օր ուշացում:***

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վերոնշվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ա/Ձ Արթուր Հարությունյանը խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 03.08.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված

խախտում, ուստի առկա են Ա/Ձ Արթուր Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.10.2021թ. թիվ 26/26-1/17601-2021 գրությամբ Ա/Ձ Արթուր Հարությունյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Արթուր Հարությունյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**